

Հաւանութեան «պահլաւիկ ռօար չէ կարող նոյնանալ նուէր-ին հետ: Բարեբախտաբար նուէր այն փոխառութիւններից է, որի ստուգարանութիւնը վաղուց եւ ճշգրտօրէն յայտնի է: Նաւէր ծագում է պարթեւ *nivēda* պարսկ. *nūvēd* نوهد, աւեստ. *ni-vaēda-* (*ni-vaedayemi* բայի մէջ): ռօար տեղ չունի այս չարքի մէջ:

Կասկածելի ենք համարում անգամ ռօար գոյութիւնը. Դինկարտի՝ *aspānvar-i Viš-aspu-* մէջ *aspānvar* վերլուծել՝ *aspā-nvar* անհետեւութիւն է, *aspā-*ի երկար *ā* կը մնայ առեղծուածային: Հասկանալի է, ինչո՞ւ Ուեստը կարդում է *aspān-pur*, կամ *aspāxur*, որպէս զի *aspā-*ի *ā* անուշադիր չթողնէ:

Պահլաւ գրերը ազատութիւն են տալիս այլ եւ այլ կերպ կարդալու: Եթէ մէկը ուզում է -n տառը տեսնել եւ կարդալ *aspān-var*, ինչպէս Պ. Ֆնտդլեանը, այն ժամանակ պիտի բառը լուծէ *aspān* եւ *var* եւ ոչ երբեք *aspā* եւ *nrar* (*aspān* սեռական հոլովն է յոգնակի, իսկ *aspā* կը լինի անհասկանալի ձեւ): *Aspāxur* քերականօրէն ճիշտ ընթերցում է *aspa + āxur = aspāxuri*, նոյնպէս քերականօրէն ճիշդ *aspān-pur*՝ «իոց քաղաք», բայց *aspā-nvar* անհետեւ է քերականօրէն:

Պ. Ֆնտդլեանին գայթակղել է խմատը: «Ասպանուէր» կարդալով, կարելի է «ձիազոհ» հասկանալ եւ ուրեմն պարզել մութ պարբերութիւնը այն մտքով որ Զրադաշտին հանդիպելիս Վշտասպ ձիու դոհ էր մատուցանում: Արդոյ պարոնը այս միտքը չնշարեցել է գիտնական Զակսոնին եւ սա «յայտնել է իր գոհունակութիւնը այս լուծումին»: Այսպէս է, որ չար մտքերը պատրուում են երբեմն առաքինի մարդկանց:

«Դինկարտ» պահլաւ գրերը յօրինուած է Թ. Ղարում Գ. յ. եւ այլ նպատակ չունի քան մեկնել բացատրել Աւեստայի սրբազան գրերը: Աւեստայում եւ ոչ մի նշան ձիազոհի, ինքը ձին գրեթէ պաշտելի է, մանաւանդ սպիտակ ձին, որը ինչպէս լուսոյ արտադրութիւն կապակից է աստուածներին: Հաւանական չէ, որ «Դինկարտ» յանկարծ մտաբերէր դարերով մոռացուած, վերացուած ձիազոհը, եւ յիշէր հակառակ Աւեստայի եւ այն էլ մի անգամ որպէս *ἄπαξ λεγόμενα*.

Պարսկ:

Պրոֆ. Ն. Արմսթ

ԼԵԶՈՒԱՐԱՆԱԿԱՆ

ՀՐԱՊԱՐԱՆ

Հարազատ բառը եւ տրոհում եմ իբր հար-ա-զատ, որով ստանում ենք մի բարդ բառ: Այս բառի երկրորդ բաղադրիչը -զատ եւ կշռում եմ պրսկ. *az* արմատի հետ, որ բարդութեանց մէջ մտնում է իբր *az*. այսպէս *ازاد*, շահածին, շահի զաւակ, շահի զարմ, շահազն: Մեր «զատ» արմատը եւ չեմ համարում փոխառութիւն, այլ բնիկ հայ արմատ: Մենք ունենք զատ, որից զատել, որ ատ արմատի սաստկական ձեւն եւ համարում. զատ նշանակում է կտրուած, անջատ, բաժան: Նա իր մէջ ունի ծնունդ գաղափարի նախաոր իմաստը, որ հին մարդու աչքին այլ բան չէր, 4 ան զաւակի անջատումը, զատումը ծնողի մարմնից:

Բայց «ի կամեցողսն լինել Արամազդ» այդ արմատը կարելի է եւ փոխառութիւն համարել: Այս դէպքում հարազատ բառն իր կազմով կը դառնայ խառնածին, այսինքն հայ եւ օտար արմատների բարդում: Այդպիսի բառեր մեր լեզուի մէջ կան: Դրանցից մէկն է կարծում եմ քարզաւանդ բառը, որի երկրորդ բաղադրիչը -անճել ծանօթ է, իսկ առաջին բաղադրիչը քարզաւ- եւ համարում եմ պրսկ. *z*. բառի գործիական հոլովը՝ իբր քարզ, *քարզի, քարզաւ: «Բարդ» նշանակում է տերել եւ ուրեմն քարզաւանդ՝ նշանակում է տերեւով աճել, տերեւակալել: Այս բառի բուն իմաստը զուգահեռ է մեր ժողովրդական օրհնանքի բանաձեւին, որ իր պատկերները բուսական աշխարհից է առնում: «Ծլեն, ծաղկես, զօրանաս» ասում է հայ պապն իր թոռանը: Նա կարող էր ասել նաեւ. «բարդաւաճես», այսինքն տերեւով աճես, տերեւակալես: «Հարազատ» բառի երկու բաղադրիչները բնիկ համարենք թէ նրանցից մէկը եկամուտ՝ դրանով մեր տրոհումը չի փոխուի. նա կը մնայ հար-ա-զատ, որի երկրորդ բաղադրիչը նշանակում է ծին, զաւակ, զարմ, ազն: Ինչ վերաբերում է առաջին բաղադրիչին, որ է հար՝ եւ դա համարում եմ հայր բառի ձեւափոխութիւնը եւ ուրեմն հարազատ կարծում եմ նշանակում է հայրածին, հօր ծնած, հօր զաւակ:

Այս կէտը մանր քննութեան կարիք ունի: «Հայր» բառից ածանցուած բառերը մեր լեզուում հետեւում են բառակազմութեան երկու

տարբեր շաւիղների, որոնց տիպարները կարող ենք համարել հայրաձին եւ հաւրաձին նոյն իմաստ բառերը: Սրանցից առաջինն իբր բաղադրիչ առնում է «հայր» բառի եզ. ուղղականը, իսկ միւսը՝ եզ. սեռականը: Բայց հայրաշարժ բառը ունի մի ուրիշ նոյնիմաստ զուգաձեւ՝ հարաշարժ: Կասկած չկայ, որ այս երկու բառերի առաջին բաղադրիչները հար եւ հայր ոչ միայն նոյն արժէքն ունին, այլ եւ նոյն բառերն են: Չգիտեմ ո՞վ է գործածել այդ բառը եւ ո՞ր դարից է (եւ աշխատում եմ Առձեռն բառգրքով, Հայկազեանը չունիմ). եթէ գրչի սխալ չէ այդ ձեւը, ապա մենք դրանով ունինք բառակազմութեան մի երրորդ շաւիղ՝ «հայր» բառից ծագած ձեւերի համար: Այս ձեւի կազմութիւնները առնում են իբր բաղադրիչ ոչ թէ հայր կամ հաւր, այլ հար: Այդ բառը կազմողը եթէ հետեւէր բառակազմութեան սովորական եղանակներին, պիտի ասէր հայրաշարժ կամ հաւրաշարժ, բայց նա ասում է հարաշարժ: Բայց այդ բառը, որ միակն է իր տեսակի մէջ, կարող է եւ գրչի սխալ լինել: Պէտք է ուրիշ հիմքեր որոնել:

Գրաբարի մէջ մէկ հոլովիչ գործածող բառերը իրենց յոգն. սեռականը կազմում են եզակի սեռականին տալով ց. բանի-բանից, գործոյ-գործոց, գանձու-գանձուց, սերման-սերմանց եւ այլն: Եթէ հայր բառն այս կարգով գնար՝ նրա յոգն. սեռականը պէտք է լինէր հարց, հարանց. բայց նա տալիս է՝ հարց, հարանց, ուր ա-երը փոխարինում են աւ-երին: Հարանց ձեւը, որ գրաբարը չի պահել՝ մնացել է գաւառական լեզուի մէջ իբր հորանց. «Հարսը գնաց հորանց տուն»: Բայց միեւնոյն բանը կարելի էր եւ ուրիշ կազմութեան բառով ասել, որ նոյնպէս մնացել է գաւառական լեզուի մէջ. «Հարսը գնաց հէրանց տուն»: Այսպիսով հորանց եւ հէրանց նոյն արժէք են: Բառակազմութեան հին ուղիներին հետեւելով՝ սրանցից մէկը իբր բաղադրիչ առած է ուղղականը — հէր = հայր, իսկ միւսը սեռականը՝ հոր: Գրաբարի «հարանց» ձեւը ենթադրում է մի ուղղական իբր *հարանք, որ գաւառականի մէջ պիտի լինէր հէրանք կամ հորանք եւ իսկապէս այդ երկու ձեւերը միաժամանակ ապրում են այսօր: «Հարսի հէրանք շատ հարուստ են» կամ «Հարսի հորանք շատ հարուստ են» նոյն իմաստն ունին: Մենք հիմա կարող ենք զուգադրել աշխարհաբար եւ գրաբար ձեւերը.

յոգ. ուղղ. *հարանք — հէրանք, հորանք

յոգ. սեռ. հարանց — հէրանց, հորանց

Երկրաչափօրէն դասելով՝ *հարանք հաւասար է հէրանք եւ հորանք ձեւերին, իսկ հարանց — հէրանց եւ հորանց ձեւերին, որ նշանակում է թէ հարանց ձեւը կարող է ծագել թէ հայրանց եւ թէ հաւրանց ձեւերից եւ ուրեմն այ եւ աւ դարձած են ա, ճիշդ ինչպէս կայ հայրաձին եւ հաւրաձին եւ կարող էր լինել *հարաձին. ինչպէս կայ հայրաշարժ, բայց եւ հարաշարժ: Այս հաշուով *հայրազատը կամ *հորազատը կ'ունենար իր երրորդ ձեւի կազմութիւնը, որ է հարազատ, այսինքն մեր քննած բառը: Այսպիսով հարազատ նշանակում է հորաձին կամ հայրաձին:

Մի երկու օրինակ եւս՝ մեր ասածի հիմքերը ամրացնելու համար: Մենք տեսանք, որ հէրանց, հորանց եւ հարանց շարքը բերում է այն եղրակացութեան թէ այ, աւ դառնում են ա: Նոյն օրէնքը մենք տեսնում ենք եւ ուրիշ նոյնաձեւ կազմութեանց մէջ: Նախ՝ յայտնի է, որ դասական հայր բառը արեւմտեան բարբառներում դարձած է հար. հետեւապէս՝ այ = ա: Բայց առնեմք մօտ բառը, որ է մատուց. գրաբարում սա տալիս է մատուցիլ, մատուցանել: Գաւառականը հետեւելով բառակազմութեան միւս շաւղին՝ ասում է մօտել, մօտեցնել, մօտենալ. իսկ «մատուցանել» բառի «մեծարել» առումը թիֆլիսի բարբառը ոճով արտայայտում է իբր «մօտ բերել». «ղնաղներին չայ մօտ բերին», այսինքն՝ հիւրերին թէյ մատուցին: Որժատունկի մատերը կարող գործիլ ին գրաբարն ասում է յօտոց, որ է յաւտոց. բայց այդ բառն ունի եւ մի ուրիշ ձեւ, որ է յաւտոց. հետեւապէս աւ = ա: Նոյն բառի աւը Արարատեան դաշտեցին ըմբռնած է իբր այ եւ նոյն գործիքին ասում է էտոց, որ է *այտոց, ինչպէս հէրը՝ հայր է եւ մէրը՝ մայր: Այս օրինակի մէջ պայծառօրէն երեւում է ձայնաշրջման մեր մատնանշած տարազը, որ է աւ, այ = ա: Եւտոց ձեւը կարող է գալ ինչպէս յաւտոց այնպէս էլ *յայտոց ձեւից. վերջին ձեւի երբեմնի գոյութեան ապացոյցն է էտոց բառը: Ճիշտ այս ձեւով հարազատ բառը նոյն արժէքն ունի, ինչ որ կ'ունենային *հայրազատ կամ *հաւրազատ ձեւերը եթէ կազմուած լինէին կամ մնային լեզուի մէջ: Մենք կարծում ենք, որ հարազատ ձեւն աւելի հին կազմութիւն է ինչպէս եւ բառն ինքը շատ հին է: Լեզուագիտական դժուարութիւն չկայ այսպիսով՝ հարազատը հայր եւ զատ արմատներից ծագած համարելու: Բայց կատարեալ ստուգաբանութեան հա-

մար բաւական չէ լեզուական վերլուծութիւնը. պէտք է բառի բուն իմաստի պատմական աղբիւրները գտնել: Անցնենք խնդրի այդ կողմի քննութեան:

Իսկապէս եթէ լաւ մտածենք՝ անհեթեթ եւ անիմաստ կը թուան հայրածին, հօրածին, հարազատ (իբր հայրածին) բառերը, որ նոյն իմաստն ունին եւ նշանակում են հօր ծնած: Ինչպէս թէ՛ հօր ծնած. միթէ հայրը կարող է ծնել: Հայի լեզուական մտածումը կարծում է, որ կարող է ծնել, ուստի հօրն ու մօրը ասում է ծնողներ, թէեւ իսկապէս մայրն է, որ ծնում է եւ ուստի իրաւամբ կոչւում է ծնող: Բայց այս մտածումը հայկական չէ, այլ մարդկային: Այս հանգամանքը մատնանշում է ընտանիքի զարգացման մի որոշ շրջան, որից պէտք է որ անցած լինենք նաեւ մենք, քանի ունինք հարազատ բառը:

Խառնակեցութեան շրջանում յայտնի չէր զաւակի հայրը. միակ անկասկածելի ծնողը մայրն էր, ուստի ձիւղագրութիւնը գնում էր մայրական գծով: Մեր իմացած ընտանիքը չկար. կային մայրեր եւ զաւակներ: Այդ շրջանը Բախոբէն անուանում է մայրիշխանութիւն: Այնուհետեւ տիրական դարձաւ հանրային մի ուրիշ կարգ, որ շարունակւում է մինչեւ այսօր եւ կոչւում է հայրիշխանութիւն: ձիւղագրութիւնը գնում է հայրական գծով. հայրը համարւում է ծնող: Հին կարգից նորին անցնելու ընթացքին՝ ենթադրում են թէ համատարած ծաւալում է ունեցել մի սովորութիւն կամ ծէս, որ կոչւում է կուլիպա եւ որ մինչեւ այսօր պահուած է տեղ-տեղ: Երկունքի ցաւով բռնուած կնոջ մօտ այր մարդը գալարւում եւ ձիւ ու հառաչ է հանում՝ ձեւացնելով թէ ինքն եւս մասնակից է ծննդկանի ցաւերին, ինքն եւս ծնում է զաւակը: Գրանով նա հաստատում է իր հայրութեան իրաւունքը զաւակի վրայ. դրանով նա ընդունում է, որ ծնող երեխան իրանից է, իր զաւակն է, «հայրածին» է, «հարազատ» է: Այս է սովորութիւնը կամ ծէսը: Սրանով՝ բնախօսապէս ծնելու անկարող աղամարդը դառնում է ծնող: Ինչ որ լեզուաբանօրէն եւ բնախօսօրէն մտածելով թւում է անհեթեթ, ընկերային գիտութեան լուսով դառնում է միանգամայն հասկանալի: Հայրը ծնող է, այո՛, բայց ծիսապէս՝ նա ծնող է այն սովորոյթի հետեւանքով, որով հաստատած է իր հայրութիւնը, որով ծնածին համարած է իր զաւակը, իր զարմը: Ահա թէ ինչու հարազատը համարեցինք շատ հին բառ:

Ժամանակի ընթացքին հարազատ բառն ստացած է իմաստաբանական զարգացում: Բոլոր շեղ իմաստները բուն իմաստի ձիւղագրումներն են: Միեւնոյն ծնողների զաւակները համարւում են հարազատ քոյր ու եղբայր: Բառի այս առումը դեռ եւս բուն իմաստի սահմանի մէջ է. քոյր ու եղբայր «հարազատ» են, քանի որ նոյն հօր «ծնածներն» են: Բայց ասում են հարազատ ընտանիք. այստեղ «հարազատ» բառի նշանակութիւնը մասամբ դուրս է եկած բառի բուն իմաստի սահմանից, քանի որ ամուսնու համար միմիայն զաւակները կարող են «հարազատ» լինել, բայց ոչ կինը: Հարազատ քոյր-եղբայրները միաժամանակ եւ մտերիմ են. կացութեան այս կողմն առնելով՝ ասում են «հարազատ ընկեր», որ նշանակում է անկեղծ եւ մտերիմ եւ որ բառի հին առումով անիմաստ բացատրութիւն է: Բուն իմաստի շեղումները տանում են մինչեւ «հարազատ մտքեր», «հարազատ օրինակ» եւ այս կարգի ուրիշ ասութիւններ, որոնց իմաստը նոյն է «իսկական» բառի հետ:

Ն. ԱՂԱՅԵԱՆ



ՅԵՂԱԳՐԱԿԱՆ

ՃՈՐՈՒԹԻ ԵՒ ԵԶՆԵՐ

առ — առուակ: — 1 — լեռ: — 12 — լեռնաշղթայ:

(Շարունակութիւն:)

Ե.

Կիսկիւմ կամ Կիցկա:

Կիսկիւմ զաւառն սկսում է երկու Հունտ-Հնուտ գեղերի առաների ձորերից, երկարւում է 40 կիլոմետր եւ վերջանում է Պալիսար վտակի խառնուելի, Սակուտ եւ Ամդէտ առաների ձորերի մօտ: Այս հովիտը ձորոյի կենդրոնական մասն է կազմում, համեմատաբար ընդարձակ դաշտեր, սարահարթեր եւ ծայրէ ծայր մշակուած ագարակներ եւ հանդեր ունի, որոնք ոռոգուած են եղել մի ժամանակ ամբողջապէս, իսկ այժմ տեղ տեղ քանի որ ջրանցքները վերջին ժեւրդ եւ ժ.ջ-րդ դարերում կործանուել եւ այլ եւս